ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Նարինե Բագրատի Պետրոսյանի «Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Կառուցվածքային բարեփոխումների հիմնախնդիրը ներկայումս շարունակում է լինել համաշխարհային տնտեսության ամենաքննարկվող թեմաներից մեկը: Վերջինիս սահմանափակ ուսումնասիրությունն ավելի է մեծացրել այս թեմայի գիտական քննարկման անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես, տնտեսական քաղաքականության տարբեր միջոցառումների համախմբի իրականացմամբ կառուցվածքային բարեփոխումների ապահովումը առավել քան կարևոր է հատկապես այն առումով, որ մերօրյա իրականության մեջ ռեսուրսահեն տնտեսական աճն այլևս ի զորու չէ ապահովելու տնտեսական զարգացման բավարար տեմպեր, ուստի կառուցվածքային բարեփոխումները աստիճանաբար ընկալվում են որպես տնտեսական աճի և զարգացման նոր հիմնարարներ: Բացի այդ, ստեղծված տնտեսական արդյունքին զուգահեռ հասարակության բարեկեցության ոչ նույնաչափ փոփոխությունը, սոցիալական, տնտեսական և այլ բնույթի հիմնախնդիրների՝ տարիներ շարունակ արդիական մնալու և չլուծված լինելու հանգամանքը հուշում են, որ իրականացված կառուցվածքային բարեփոխումները իրենց բնույթով չեն նպաստել կամ մասամբ են նպաստել վերոնշյալ խնդիրների լուծմանը, իսկ ապահովված տնտեսական արդյունքը գերազանցապես եղել է իրավիճակային մակրոտնտեսական քաղաքականության և արտաքին գործոնների ազդեցության հետևանք՝ կառուցվածքային բարեփոխումների կենսագործման իրական նպատակները թողնելով միայն թղթի վրա: Կառուցվածքային բարեփոխումների մի ստվար մասը շարունակում է գերազանցապես ուղղվել հիմնախնդիրների նույն համախմբի լուծմանը՝ արտացոլելով վերջիններիս ոչ բավարար արդյունավետ լինելու հանգամանքը, ինչը պարտադրում է քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին վերանայել և վերարժևորել կառուցվածքային բարեփոխումների իրականացման ուղղությունները, թիրախները, նպատակներն ու գործիքակազմը՝ կառուցվածքային բարեփոխումների փաստահեն, նպատակային ու արդյունքամետ կենսագործման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության, որակական բնույթ ունեցող ցուցանիշների քանակական գնահատման մեթոդաբանության մշակման, այդ ոլորտում առկա հիմնական կապերի ու ազդեցությունների բնույթի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված արդյունավետ գիտագործնական լուծումներ և կառուցվածքային բարեփոխումների իրականացմանն ուղղված քաղաքականության բարելավման առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ: Թեմայի արդիականությունը բխում է նաև դրան առնչվող ինչպես

արդիական տեսամեթոդական, այնպես էլ գիտագործնական մշակումների իրականացման հրատապությամբ և անհրաժեշտությամբ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում իրականացված կառուցվածքային բարեփոխումների բնույթի ու դրա մակրոտնտեսական ազդեցությունն ապահովող հիմնական գործիքակազմերի, մասնավորապես, կառուցվածքային բարեփոխումների հիմնական ուղղությունների, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրմամբ առկա հիմնախնդիրների բացահայտումը և իրականացվող կառուցվածքային բարեփոխումների գործիքակազմի ու մեխանիզմների բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումն է:

Հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առկա տեսությունների և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան, «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային փոփոխություն» եզրույթների շուրջ ձևավորված տարակարծությունները, հետազոտել կառուցվածքային բարեփոխումների և մակրոտնտեսական ցուցանիշների վրա վերջինիս գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները:
- Ուսումնասիրել և վերլուծել կառուցվածքային բարեփոխումների ընթացիկ վիճակը Հայաստանի Հանրապետությունում և մի շարք այլ երկրներում և տարածաշրջաններում՝ միջազգայնորեն հայտնի ինդեքսների հիման վրա:
- Հետազոտության շրջանակներում գնահատել Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը՝ բարեփոխումների արդյունավետ համախմբի ընտրության և թիրախայնության բարձրացման համատեքստում:
- Կառուցվածքային բարեփոխումների քանակականացման և չափելի դաշտ բերելու նպատակով ձևավորել, հաշվարկել, վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը, ապա նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը՝ առաջնորդվելով բարեփոխումների հիմնական ուղղություններով:
- Կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության գնահատման նպատակով վերլուծել և գնահատել ըստ տնտեսության հիմնական հատվածների (իրական, ֆինանսական, հարկաբյուջետային, աշխատանքի շուկա) կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության համատեքստում, առանձնացնել դրանց քանակական պարամետրերը և որակական կողմերը:
- Հետազոտել, գնահատել և վերլուծել հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները մակրոտնտեսական հիմնական փոփոխականների և տնտեսության առանձին հատվածների վրա (իրական, հարկաբյուջետային, դրամավարկային), բացահայտել և պարզաբանել, թե ըստ կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների որ

համադրությունն է ապահովում մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքման համեմատաբար բարձր մակարդակը:

- Ուսումնասիրել «կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրը և վերջինիս դրսևորումները՝ կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և վերջինիս արդյունավետության դիտանկյունից:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը. Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթները հանգում են հետևյալին.

- Մշակվել է կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման մոդել, որը հնարավորություն է ընձեռում սիմուլյացիոն սցենարների միջոցով բացահայտել տնտեսության այն ոլորտները, կամ քաղաքականության ուղղությունները, որոնցում առկա է բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն՝ եկամտի թիրախային մակարդակն ապահովելու համար:
- Հայաստանի Հանրապետության համար մշակվել են կառուցվածքային բարեփոխումների և առանձին հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերլուծելու և գնահատելու բարեփոխումների ինտենսիվությունը՝ հիմնվելով դրանց մակրոտնտեսական նշանակության և իրականացման աստիճանի վրա:
- Կառուցվածքային վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորմամբ (SVAR) ինչպես հատվածային (իրական, ֆինանսական, հարկաբյուջետային, աշխատանքի շուկա), այնպես էլ համակցված մոդելներով գնահատվել են կառուցվածքային բարեփոխումների շոկի նկատմամբ ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների արձագանքի բնույթը, ուղղությունը, չափերն ու տևողությունը, ըստ որի՝ կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների վրա ավելի մեծ է դրանց իրականացման առաջին փուլում, իսկ միջնաժամկետում և երկարաժամկետում ազդեցությունը դրսևորում է մարման միտում:
- Հիմնավորվել է, որ Հայաստանում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների շարքում հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների մասնաբաժինը ամենամեծն է, ուստի կառուցվածքային վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորմամբ (SVAR) հատվածային (իրական, դրամավարկային, հարկաբյուջետային) և համակցված մոդելներով գնահատվել է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների շոկի նկատմամբ ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքի բնույթը, ուղղությունն ու չափերը: Ըստ այդմ՝ այդ ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա երկարաժամկետում նվազող է: Ընդ որում՝ գնահատումները վկայում են, որ թեև բարեփոխումների քանակի նշանակալիությանը, դրանց ազդեցությունը դեռևս շարունակում է փոքր մնալ ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը. Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, որակական և քանակական վերլուծությունների արդյունքները, արված առաջարկությունները և եզրակացությունները

գործնականում կարող են օգտագործվել ՀՀ պետական տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների, այդ թվում՝ մակրոտնտեսական քաղաքականության պլանավորման, բյուջետային համակարգի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտում անհրաժեշտ իրավական ու օրենսդրական փոփոխությունների իրականացման և այլ խնդիրների լուծման համար:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացների լավարկման և արդյունավետության բարձրացման աշխատանքներում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 187 էջ՝ առանց հավելվածների: Ատենախոսությունը պարունակում է 31 գծապատկեր, 8 աղյուսակ, 161 անուն գրականության ցանկ և 13 հավելված:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը. Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության **առաջին՝ ««Կառուցվածքային բարեփոխումներ» հասկացությունը և դրա ուսումնասիրության տեսամեթոդաբանական ասպեկտները»** գլխում ուսումնասիրվել են կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ տեսությունների և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան, «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային փոփոխություն» եզրույթների շուրջ ձևավորված տարակարծությունները, քննարկվել են կառուցվածքային բարեփոխումների և մակրոտնտեսական ցուցանիշների վրա վերջինիս գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները: Ամփոփելով և համադրելով կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներն ու ձևակերպումները, հեղինակի կողմից տրվել է կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ արդիական ու բովանդակային տեսանկյունից ամբողջական սահմանում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մակրոտնտեսական ցուցանիշների վրա կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»** գլխում հեղինակը միջազգային հայտնի ինդեքսների հիման վրա քննարկել է կառուցվածքային բարեփոխումների շարժընթացը ՀՀ-ում՝ համադրելով հարևան երկրների տարածաշրջանային զարգացումների հետ, *գնահատել է Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը՝* բարեփոխումների արդյունավետ համախմբի ընտրության և թիրախայնության բարձրացման համատեքստում, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների քանակականացման և չափելի դաշտ բերելու նպատակով *ձևավորել, հաշվարկել, վերլուծել և գնահատել է Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը*, ապա նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը:

Ատենախոսության երրորդ՝ **«Կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության բարելավման ուղիներն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության գնահատման նպատակով վերլուծվել և գնահատվել են կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները, առաձնացվել են դրանց քանակական պարամետրերը և որակական կողմերը: Բացի այդ, հետազոտվել, գնահատվել և վերլուծվել են ***հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների*** կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները մակրոտնտեսական հիմնական փոփոխականների և տնտեսության առանձին հատվածների վրա, բացահայտվել և պարզաբանվել է, թե ըստ կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների որ համադրությունն է ապահովում մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքման համեմատաբար բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ, քննարկվել են «կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրը և վերջինիս դրսևորումները՝ կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և վերջինիս արդյունավետության դիտանկյունից:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշխատանքում մեծ է մտասևեռումը և կենտրոնացումը հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսի գնահատման, դրա իրատեսական լինելու և դերակատարության վրա:
   Չարժե կենտրոնանալ, օրինակ, միայն ինդեքսի վրա և օրինակ նախընտրական շրջանի տրամաբանության մեջ դիտարկել այս կամ այն բարեփոխման արագությունը (տեմպը կամ անկման չափը): Դրա փոխարեն, եթե օրինակ խոսքը գնում է հարկաբյուջետային բարեփոխումների կամ հարկաբյուջետային կանոնի մասին, պետք է քննարկել հարկային օրենսգրքի փոփոխությունների ազդեցությունը բիզնեսի վրա և/կամ պետական պարտքի ավելացումը հարկաբյուջետային կանոնի համատեքստում:
2. Ատենախոսության 117-րդ էջում նշվում է. «ՀԿԲԻ-ն կամուրջ է հանդիսանում բարեփոխումների չափման մեթոդաբանական բացը լրացնելու համար: Վերջինիս կիրառումը Հայաստանում ցույց է տալիս, թե ինչպես կարող է բարեփոխումների գնահատման բազմաչափ մոտեցումը կապող օղակ դառնալ տնտեսական պայմանների, քաղաքական խթանների և կառուցվածքային բարեփոխումների միջև փոխազդեցությունը մեկնաբանելու տեսանկյունից»: Նախ շատ բարդ է նկարագրված և երկրորդ անհրաժեշտ է օրինակ բացատրել քաղաքական խթանը ո՞րն է և այն ինչպես է փոխառնչվում, օրինակ տնտեսական պայմանների հետ: Դա շատ հետաքրքիր է:
3. Քննարկելով կառուցվածքային բարեփոխումների դերն ու նշանակությունը և իհարկե ազդեցությունը՝ ատենախոսը չի կոնկրետացնում այն մինչև ճյուղային և կամ միկրոմակարդակ: Այսպիսով մակրոմակարդակում իրականացված բարեփոխումների իրական ազդեցությունը տնտեսության և բիզնեսի վրա արտացոլվում են իրեղեն գնահատումներով: Ատենախոսության մեջ նշվում է, թե մի շարք օտարերկրյա

պետություններում բարեփոխումները ինչպես են ազդում ՀՆԱ-ի աճի վրա, իսկ Հայաստանի համար կա՞ այդպիսի գնահատում:

4. Ատենախոսության վերջնամասում ներկայացվել է 3 առաջարկ, որոնք վերաբերում են բարեփոխումների կիրառման հավանականությանը, որոնք իմ կարծիքով եզրակացության բնույթ ունեն առավելապես:
5. Ընդհանրապես կարծում եմ, որ չարժեր այդքան կենտրոնանալ կառուցվածքային բարեփոխումների ինդեքսի վրա և շատ քննարկել միջազգային կառուցների կատարած ընդհանրական, մի քիչ էլ անհասկանալի գնահատականները:
6. Աշխատանքում նկատվում են ոճային և խմբագրական որոշ բացթողումներ և թերություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը:

Նարինե Բագրատի Պետրոսյանի «Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ամփոփված են հրապարակված 7 գիտական հոդվածներում, որոնցից 4-ը ներառված են SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Նարինե Բագրատի Պետրոսյանի «Կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական հետևանքների գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Մ. Ս. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
«28» հունվար 2026 թ.

ՄԻՔԱՅԵԼ ՍԵՐԳԵՅԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Ն. Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ
«28» հունվար 2026 թ.